

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## 1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ

2

1.1 Օրենքներ -----	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ -----	18
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ-----	21

## 2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ

25

## 3. Հարկային և մաքսային վարչարության ներքին դրվագներ

30

3.1 Ծրագրեր և կատարողական -----	30
3.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական ըննությունների -----	31
3.3 Միջազգային համագործակցություն -----	31
3.4 Հարկային և մաքսային թվերի համառոտագիր -----	32

# 1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱԶՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1 | Օրենքներ

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ԶՕ-177-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ եթե առանց ուսումնասիրության կամ ստուգման հաշվանցում և (կամ) վերադարձ կատարելու վերաբերյալ հարկ վճարողի դիմումի համաձայն այլ հարկային պարտավորության դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ներկայացված գումարը գերազանցել է օրենքով սահմանված կարգով որոշվող համապատասխան գումարը, հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ ավել հաշվանցված և (կամ) վերադարձված գումարի 50 տոկոսի չափով: Այդ դեպքում հաշվանցման օրվա դրությամբ կատարվում է հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների վերահաշվարկ (հաշվանցված այլ հարկային պարտավորության վերականգնում)՝ ավել հաշվանցված գումարի չափով, իսկ վերադարձի դեպքում վերադարձի օրվա դրությամբ առաջարվում է հարկի գծով պարտավորություն՝ ավել վերադարձված գումարի չափով, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկ վճարողից «Ազելաց-

ված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ ենթակա է գանձման թաքցված կամ պակաս ցույց տրված ԱԱՀ-ի գումարը:

Օրենքի հավելված 1-ում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով օրենքով սահմանված կարգով որոշվող՝ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա՝ գերավճարի մնացորդ չհանդիսացող գումարը կարող է արձանագրել առանց ուսումնասիրության և հարկ վճարողի դիմումի համաձայն ուղղվել հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների մարմանը և (կամ) վերադարձվել, եթե հարկ վճարողը ՀՀ կառավարության սահմանած չափանիշներին համապատասխան ռիսկային չի համարվում: 2011-2012 թվականներին ռիսկային չհամարվող հարկ վճարողներին ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարներն առանց ուսումնասիրության հաշվանցվում և (կամ)



Վերադարձվում են, եթե հաշվետու ամսվա արդյունքներով հաշվանցման և (կամ) վերադարձման Ենթակա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի հանրագումարը, իսկ ակցիզային հարկ չվճարողների համար՝ ԱԱՀ-ի գումարը՝ 2011 թվականին չի գերազանցում 5 մլն դրամը, իսկ 2012 թվականին՝ 10 մլն դրամը:

Ոիսկային համարվող հարկ վճարողների, ինչպես նաև հաշվանցման և (կամ) վերադարձման Ենթակա գումարների սահմանված չափը գերազանցելու դեպքում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով օրենքով սահմանված կարգով որոշվող՝ վճարողի այլ

հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման Ենթակա գերավճարի մնացորդ չհանդիսացող գումարներն արձանագրվում են ուսումնասիրությամբ:

Սահմանվում է նաև, որ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարների հաշվանցումը և (կամ) դրանց վերադարձն իրականացվում են միայն հարկ վճարողի դիմումի հիման վրա (նախկինում՝ հարկ վճարողի դիմումի հիման վրա՝ հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի ուսումնասիրության կամ ստուգման արդյունքներով):

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-181-Ն
Ցրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ են	2011 թվականի հունվարի 1-ից

## Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ հարկային պարտավորությունների հաշվառման համար հարկային մարմնում բացվում են անձնական հաշվի քարտեր: Հարկային պարտավորությունները և դրանց մարումները, ինչպես նաև հարկային պարտավորություններից ավել վճարված գումարները հաշվառվում են դրամով (առանց լրւմաների): Հարկ վճարողի լրտարման դեպքում հարկերի, տույժերի և տուգանքների մինչև հարյուր դրամ ընդհանուր պարտավորությունները, գերավճարները և գերավճարից տարբերվող գումարներն անտեսվում են:

Սահմանվում է նաև, որ հարկային պարտավորությունները հաշվառվում են օրենքով սահմանված վճարման վերջնաժամկետով՝ անկախ հաշվարկների ներկայացման ամսաթվից, իսկ հաշվանցվող գումարները՝ առաջին հաշվարկների ներկայացման ամսաթվով:

Որևէ հաշվետու ժամանակաշրջան (ամիս, եռամյակ, կիսամյակ, տարի) սկսվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի առաջին ամսվա 1-ից և ավարտվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա վերջին օրով: Հարկային մարմին հաշվարկները ներկայացվում են հաշվետու ժամանա-

կաշրջանի ավարտից հետո (բացառությամբ հարկ վճարողի լրտարման, ոչ ռեզիդենտի գործունեության դադարեցման կամ ֆիզիկական անձի՝ ՀՀ-ից մեկնելու դեպքերի, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ներկայացվող գույքահարկի և հողի հարկի հաշվարկների): Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո մինչև այդ հաշվետու ժամանակաշրջանի հաշվարկների ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետների վերջին օրը ներկայացված մեկից ավելի հաշվարկներից առաջինը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված հաշվարկ, իսկ մյուսները՝ ճշտված հաշվարկ:

Հարկ վճարողի լրտարման դեպքում մինչև հաշվետու ժամանակաշրջանների ավարտը հարկային մարմին ներկայացված միջանկյալ և (կամ) լրտարային հաշվարկները համարվում են հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված հաշվարկներ, եթե այդ հաշվարկները ներկայացնելուց հետո մինչև հաշվետու ժամանակաշրջանների ավարտը հարկ վճարողը որևէ գործարք կամ գործառնություն չի կատարել, իսկ նշված հաշվարկները ներկայացնելուց հետո մինչև հաշվետու ժամանակաշրջանների ավարտը որևէ գործարք կամ գործառ-

Նություն իրականացնելու դեպքում տվյալ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացվում են հաշվարկներ, որոնք չեն համարվում ճշտված հաշվարկներ:

Մինչև օրացուցային տարին ավարտվելը ոչ ռեզիդենտի գործունեության դադարեցման դեպքում հարկային մարմին ներկայացվող հաշվարկները համարվում են հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված հաշվարկներ, իսկ դրանից հետո այդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացվող հաշվարկները համարվում են ճշտված հաշվարկներ:

Ֆիզիկական անձի՝ ՀՀ-ից մեկնելու դեպքում մինչև հաշվետու ժամանակաշրջանների ավարտը հարկային մարմին ներկայացվող հաշվարկները համարվում են հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված հաշվարկներ, իսկ դրանից հետո այդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացվող հաշվարկները համարվում են ճշտված հաշվարկներ:

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ հարկ վճարողի կողմից հարկային տեսչություն ներկայացվող հաշվարկը (հաշվետվությունը, հայտարարագիրը) հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու կամ չներկայացնելու համար սահմանվող տուգանքների հանրագումարը չպետք է գերազանցի վճարման ենթակա հարկի ընդհանուր գումարի՝ օրենքով սահմանված վճարման ժամկետին չվճարված գումարը, իսկ 15 օրվա ժամկետը հաշվարկելիս ոչ աշխատաքային օրերը հաշվի են առնվում միայն առաջին տուգանքի հաշվարկման ժամանակ: Տուգանքի հաշվարկումը դադարում է տվյալ հարկի հաշվարկը հարկային տեսչություն ներկայացնելու



լու պահից կամ տվյալ հարկատեսակի գծով պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումը ներառող ստուգման ավարտից:

Օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ սահմանվում է, որ առանձին հարկատեսակների կամ դրանց փոխարինող վճարների մասին օրենքներում (բացառությամբ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով) հարկային հաշվարկների ճշտման մասին ուղղակի նշում կատարված չլինելու դեպքում հարկ վճարողը կարող է ներկայացնել ճշտված հարկային հաշվարկներ՝ հաշվի առնելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված սահմանափակումները:

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում են նաև, որ ստուգման ակտով առաջարկված հարկի գումարների նկատմամբ 10-օրյա ժամկետում «Հարկերի մասին» ՀՀ օրենքով հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում նախատեսվող տույժերը չեն հաշվարկվում: Այդ ժամկետը լրանալուց հետո ստուգման ակտով առաջարկված հարկի գումարների չվճարման կամ մասնակի վճարման դեպքում վերոնշյալ տույժերի հաշվարկի վերսկսման ժամանակ նշված 10-օրյա ժամկետը հաշվի չի առնվագում:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի հավելված 1-ի 3-րդ բաժնում՝ պարտավորությունների և հաշվանցվող գումարների ժամանակագրական կարգով մարումը, կատարված լրացմամբ սահմանվում է, որ ժամանակագրական կարգի կիրառման ժամանակ, հարկ վճարողի կողմից ՀՀ բյուջեներ կատարված փաստացի վճարումների հաշվին, եթե հարկ վճարողը կոնկրետ չի նշել, թե որ ժամանակաշրջանի և որ պարտավորության մար-

մասն է այն վերաբերում (նպատակային չէ), առաջնահերթ մարզում են տվյալ հարկատեսակի գծով առկա հարկային պարտավորությունները՝ հարկի գումարներ, տույժեր,

տուգանքներ հերթականությամբ, իսկ որևէ հարկատեսակին չվերաբերող տուգանքներից առաջնահերթ մարզում են կրկնապատկվող տուգանքների գումարները:

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-197-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի ապրիլի 1-ից

## Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցում ստացած կազմակերպությունները և հաշվառված անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցված կազմակերպությունները գրանցում (հաշվառում) ստանալու պահից համարվում են հաշվառված հարկային տեսչությունում:

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ Ելեկտրոնային եղանակով հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների, այլ փաստաթուղթերի և տեղեկությունների ներկայացումը 2010թ. հուլիսի 1-ից պարտադիր է նաև նախորդ

հաշվետու տարվա արդյունքներով 100 մլն դրամ և ավելի իրացման շրջանառություն ունեցող անհատ ձեռնարկատերերի համար (ուժի մեջ է պաշտոնական օրվան հաջորդող տասներորդ օրվանից):

Ելեկտրոնային եղանակով և ժամկետներում հաշվարկը, հայտարարագիրը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթ հարկային մարմին չներկայացնելն առաջացնում է Վարչական իրավախախոտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով և «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված պատասխանատվություն (ուժի մեջ է պաշտոնական օրվան հաջորդող տասներորդ օրվանից):

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-207-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 29.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

## Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված նաև այն դեպքերում, եթե գործել են համաձայնեցված՝ Ելեկտր ընդհանուր տնտեսական շահերից:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի, հարկային հարաբերությունները կարգավորող այլ օրենքների և այլ իրավական ակտերի իմաստով իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց՝ ընդհանուր տնտեսական շահերից Ելեկտր համաձայնեցված գոր-

ծելու, ինչպես նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողները ճանաչվում են փոխկապակցված հարկային մարմնի դեկավարի որոշմամբ՝ հիմք ընդունելով երրորդ անձանցից (այդ թվում՝ պետական մարմիններից) ստացված կամ օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ծեռքբերված տեղեկությունները: Այս հիմքերով ընդունված հարկային մարմնի դեկավարի որոշումը չեղյալ կարող է համարվել միայն դատարանի վճռով:

Փաստաթուղթ	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-267-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 30.12.2010թ.
Ուժի մեջ ե	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ Ներդրումային ֆոնդի (քացառությամբ կենսաթոշակային ֆոնդի)՝ որպես հարկ վճարողի հետ կապված բոլոր

հարաբերություններում նրա փոխարեն հանդես է գալիս տվյալ Ներդրումային ֆոնդի կառավարիչը՝ այդ Ներդրումային ֆոնդի հաշվին:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	07 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-179-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ԱԱՀ-ից ազատվում են ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի մատակարարման գործարքները, որով պայմանավորված փոփոխություն է կատարվել նաև նույն օրենքի 24.1-րդ հոդվածում (միչև 2011 թվականի հունվարի 1-ը ոռոգման ջրի մատակարարման գործարքների մասով ԱԱՀ-ի վճարման պարտավորությունների ծագման պահի որոշման վերաբերյալ):



Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-192-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ հարկային հաշիվ դուրս է գրվում ապրանք մատակարարելու կամ ստացողի կողմից ծառայությունն ընդունելու օրը (նախկինում՝ մինչև այդ գործարքի մասով ԱԱՀ-ի պարտավորության ծագման պահը):

Սահմանվում է, որ Էլեկտրոնային հարկային հաշիվը Էլեկտրոնային փաստաթուղթ է և պաշտպանված է Էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հարկային հաշիվ չեն օրենսդրությամբ կրծատ հաշիվ համարվող հաշվարկային փաստաթղթերը: Ուժը կորցրած է ճանաչվել օրենքի 19-րդ

հոդվածի 6-րդ կետը, որով սահմանվում էր, որ հարկային հաշիվներ դուրս չեն գրվում պետական կառավարչական հիմնարկներին ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման գործարքների մասով:

Սահմանվում են նաև թղթային կամ էլեկտրոնային հարկային հաշիվներին

ներկայացվող պահանջները:

Ուժը կողցրած է ճանաչվում օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությունը՝ ձեռքբերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով ուշ ստացված հարկային հաշիվներում առանձնացված և հաշվանցման նմանակա ԱԱՀ-ի գումարների հաշվանցման վերաբերյալ:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-208-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 29.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ հասույթի որոշման նպատակով հաշվի է առնվում նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքների կոմիսիոն հիմունքներով վաճառքի դեպքում՝ վաճառված ապրանքների ընդհանուր արժեքը (ներառյալ ԱԱՀ-ն):

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ԱԱՀ-ի շեմը չի կիրառվում՝ **ա) այն անձանց նկատմամբ, որոնց ,ներմուծում՝ ազատ շրջանառության համար մաքսային ռեժիմով առևտրային գործունեության (վաճառքի) նպատակներով ՀՀ ներմուծած՝ օրենքով հաստատված ցանկում ընդգրկված ապրանքների (որոնցից ԱԱՀ-ն մաքսային մարմինների կողմից չի**

հաշվարկվում և գանձվում) իրացման գործարքներից առաջացող հարկվող շրջանառությունը հաշվետու տարվա որևէ պահին գերազանցում է 1 մլն դրամը: Այս դեպքում անձը համարվում է ԱԱՀ վճարող 1 մլն դրամի շեմը գերազանցելու պահից մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը՝ 1 մլն դրամը գերազանցող մասի և այլ հարկվող գործարքների մասով: Սահմանվում է, որ առևտրական գործունեության (վաճառքի) նպատակներով ՀՀ ներմուծված ապրանքը է դիտվում այն գույքը, որն առանց օգտագործելու (շահագործվելու) օտարվել է, **բ) «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հարկման նկատմամբ փոխկապակցված համարվող անձանց նկատմամբ:**

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-213-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 29.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Օրենում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ ԱԱՀ վճարող համարվելուց դադարած անձանց մոտ ԱԱՀ վճարող համարվելուց դադարելու օրվա դոությամբ առկա ԱԱՀ-ի դեբետային մնացորդը (առանց գերավճարի և գերավճարից տարբերվող գու-

մարի և հաշվի առած ԱԱՀ վճարող համարվելու վերջին հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկների արդյունքը) ենթակա չէ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման և վերագրվում է արտադ-



դության և շրջանառության ծախսերին: Արտադրության և շրջանառության ծախսերին վերագրված գումարի մեծության վերաբերյալ հարկ վճարողը ԱԱՀ վճարող համարվելու օրվան հաջորդող մեկամյա ժամկետում գրավոր տեղեկացնում է հարկային մարմ-

նին: Նշված ժամկետում գրավոր տեղեկացնում չստանալու դեպքում ԱԱՀ-ի դեբետային մասցորդը հարկային մարմնի կողմից հանվում է հաշվառումից՝ մինչև ԱԱՀ-ի դեբետային մասցորդի նվազեցման ենթակա գումարի մեծության հիմնավորումը:

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ԱԱՀ վճարող չհամարվող անձանց կողմից դուրս գրված (նախկինում այս դրության նշված օրենքում նախատեսված չեր) կամ հաստատագրված վճարով հարկվող կամ պարզեցված հարկով հարկվող գործունեությանը վերաբերող կամ ՀՀ կառավարության սահմանած կարգի խախտմամբ կամ ապօռինի ծեռքբերված կամ պատճենահանված ձևերի լրացմամբ հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերածնակերպման (հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներից պակասեցման) այն հաշվետու ժամանակաշրջանում, որում պարզվել կամ արձանագրվել է դրանց հաշվանցման անթույլատրելիությունը:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-213-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 29.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ԱԱՀ-ից ազատվում են ներդրումա-

յին ֆոնդի կառավարումը և ներդրումային ֆոնդի պահառությունը:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-269-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 30.12.2010թ.
Ուժի մեջ ե	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Օրենքով փոփոխություն է կատարվել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 40.1-րդ հոդվածում (շահութահարկի վճարման ժամկետների հետաձգման վերաբերյալ), որի համաձայն նշված հոդվածով սահման-

ված գործարքների իրականացման համար շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունը տարածվում է մինչև 2011 թվականը:

Փաստաթուղթ	«Ծահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	07 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-180-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

## Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ «Ծահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով եկամուտ չեն համարվում յուրաքանչյուր հարկատեսակի (այդ թվում՝ հարկերին փոխարինող վճարների), տուրքերի և պարտադիր այլ վճարների, բնօգտագործման վճարների, տույժերի և տուգանքների մինչև հարյուր դրամ պարտավորությունների գումարները, որոնք հարկ վճարողի լուծարման դեպքում անտեսվում են:

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ծախս չհամարվող տարր են համարվում յուրաքանչյուր հարկատեսակի (այդ թվում՝ հարկերին փոխարինող վճարների), տուրքերի և պարտադիր այլ վճարների, բնօգտագործման վճարների, տույժերի և տուգանքների մինչև հարյուր դրամ գերաճարների և գերաճարից տարբերվող գումարները, որոնք հարկ վճարողի լուծարման դեպքում անտեսվում են:

Ծահութահարկ վճարողներն իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմին յուրաքանչյուր տարվա արդյունելու մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը (Ներառյալ), ներկայացնում են սահմանված կարգով հարկային մարմին կողմից հաստատված շահութահարկի հաշ-

վարկներ, իսկ հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարող ԱՎՀ վճարող չհամարված կազմակերպությունները՝ շահութահարկի պարզեցված հաշվարկներ:

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ, նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի և (կամ) շահութահարկի հաշվարկային մեծության մեկ վեցերորդի չափով՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից ոչ ուշ:

Հանվել է նոր հիմնադրված հարկատուի կողմից մինչև հաջորդ տարվա ապրիլի 25-ը շահութահարկի կանխավճարներ չկատարելու վերաբերյալ նախորդ հարկային տեսչության մարմինի հայտնելու պահանջը:

Օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ սահմանվում է, որ նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա հարկվող շահույթը պակաս նախատեսելու դեպքում հարկատուն կանխավճարի եռամսյակային մեծությունը որոշում է ինքնուրույն՝ հարկային տեսչության մարմիններ ներկայացնելով վերադաս հարկային մարմին կողմից հաստատված ծեփ հայտարարություն: Հաշվարկված կանխավճարների տարեկան հանրագումարը տվյալ տարվա փաստացի շահութահարկի երկու երրորդից պակաս լինելու դեպքում հարկատուն վճարում է տույժ՝ փաստացի ստացված շահութահարկի մեկ վեցերորդի և տվյալ եռամսյակում փաստացի վճարված կանխավճարի տարբերության գումարի նկատմամբ՝ կանխավճարի վճարման համար օրենքով սահմանված օրվանից մինչև հարկային տեսչության մարմինի փաստացի շահութահարկի գումարը հայտի դառնալու օրը:

Սահմանվում է, որ շահութահարկի կանխավճարի գումարը յուրաքանչյուր եռամսյակի ընթացքում օրենքով սահմանված մեծության մեկ տոկոսից պակաս լինելու դեպքում հարկատուն պարտավոր է կատարել



Նվազագույն շահութահարկի եռամսյակային վճարումներ:

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է ոչ ռեզիդենտի կողմից հարկային մարմիններ տարեկան եկամուտների մասին հաշվարկ (նախկինում՝ հայտարարագիր) ներկայացնելու և դրա հիման վրա շահութահարկի հաշվարկման կարգը:

Սահմանվում է նաև, որ սահմանված կար-

գով հաշվարկների (վերջնահաշվարկի) իրականացումից հետո պետական բյուջե լրացնից վճարման ենթակա շահութահարկը վճարվում է կամ գերավճարը հատուցվում է մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 25-ը (սերայալ)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով (նախկինում՝ ծանուցագիրը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում):

Փաստաթուղթ	«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-189-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն պահիված (գանձված) շահութահարկի գումարը հարկային գործակալը պարտավոր է ոչ ռեզիդենտին եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ վճարել բյուջե (նախկինում՝ հաջորդող ամսվա 5-ից): Հարկային գործակալը պարտավոր է տարին մեկ՝ հաջորդ տարվա փետրվարի 20-ից ոչ ուշ, սահմանված ձևով ներկայացնել ամփոփ հաշվարկ իր գտնվելու (հաշվառման) վայրի հարկային տեսչության մարմին՝ անցած տարում ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների, պահիված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին (ամսական կտրվածքով):



Փաստաթուղթ	«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-265-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 30.12.2010թ.
Ուժի մեջ ե	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ շահութահարկ վճարողներ են հանդիսանում նաև պայմանագրային ներդրումային ֆունդերը, բացառությամբ՝ կենսա-

թոշակային ֆունդերի: Ներդրումային ֆունդի՝ որպես հարկատուի հետ կապված օրենքով նախատեսված բոլոր հարաբերություններում նրա փոխարեն հանդիսանութեան գալիս տվյալ

Ներդրումային ֆոնդի կառավարիչը՝ այդ Ներդրումային ֆոնդի հաշվին:

Սահմանվում է, որ հարկվող շահույթը ներդրումային ֆոնդերի համար նրա գուտ ակտիվներն են: Յարկվող շահույթի որոշման համար Ներդրումային ֆոնդի գուտ ակտիվների հաշվարկման կարգը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը՝ համաձայնեցնելով ֆինանսական ոլորտում ՀՀ կառավարության լիազոր մարմին հետ: Ըստ որում, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով Ներդրումային ֆոնդի գուտ ակտիվներից չեն նվազեցվում իր մասնակիցներին Ներդրումային ֆոնդի ակտիվներից շահաբաժնի կամ նման այլ ձևով կատարված բաշխումների գումարները:

Մեկ այլ լրացմամբ սահմանվում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով Եկամուտ չեն համարվում Ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերից ստացվող միջոցները (այդ թվում՝ դրանց օտարումից, փոխանակումից, այլ նմանատիպ գործարքներից, շահաբաժնների բաշխումից կամ նման այլ ձևով կատարված բաշխումներից, ինչպես նաև պայմանագրային Ներդրումային ֆոնդի ակտիվների հաշվին կատարված գործարքներից):

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով ծախս չեն համարվում պարտադիր սոցիալական ապահովության վճարները (ուժի մեջ է 2013 թվականի հունվարի 1-ից), իսկ մեկ այլ լրացմամբ՝ ծախս են համարվում գործատուի կողմից վարձու աշխատողի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության



պայմաններով կատարված վճարումները: Սահմանվում է, որ ծախս չեն համարվում Ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերի ձեռքբերման և օտարման, ինչպես նաև այդ ֆոնդերում մասնակցության հետ կապված այլ ծախսերը: Սահմանվում է, որ Ներդրումային ֆոնդերի մասնակիցների հարկվող շահույթը որոշելիս համախառն Եկամտից չեն նվազեցվում Ներդրումային ֆոնդերում մասնակցության հետ կապված կորուստները և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ նվազեցումները: Ներդրումային ֆոնդերի համար գուտ ակտիվների նկատմամբ շահութահարկի դրույթաչափը սահմանվում է 0.01 տոկոս:

Սահմանվում է, որ շահութահարկի վճարումից ազատվում է «Կուտակային կենսաթոշակային մասին» ՀՀ օրենքով սահմանված Երաշխիքային ֆոնդը՝ (ուժի մեջ է 2014 թվականի հունվարի 1-ից) հետևյալ Եկամուտների մասով.

**ա.** Կենսաթոշակային ֆոնդի կառավարչների կողմից «Կուտակային կենսաթոշակային մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վճարված պարբերական և միանվագ Երաշխիքային վճարներ,

**բ.** Երաշխիքային ֆոնդի կողմից մասնակիցներին հատուցված և կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ ձեռք բերված պահանջի հիման վրա դրանցից ստացված գումարներ,

**գ.** Կատարված Ներդրումներից ստացված Եկամուտներ:

Սահմանվում է նաև, որ հարկատուի հարկվող շահույթը որոշելիս համախառն Եկամուտը նվազեցվում է հարկատուի յուրա-



քանչյուր վարձու աշխատողի համար հարկատուի կատարած կամավոր կուտակային կենսաթոշակային վճարումների 50 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան տվյալ վարձու աշխատողի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների 2.5 տոկոսի չափով: Այս նվազեցումը չաետք է գերազանցի գործատուի կատարած՝ տվյալ վարձու աշխատողի աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների

7.5 տոկոսը (գործում է մինչև «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ պարտադիր կուտակային վճարումներ կատարելու պարտավորության ուժի մեջ մտնելու ամսվա վերջին օրը): «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ՝ ուղղիկնետների շահութահարկի կանխապնարները, և 47.1-ին՝ շահութահարկին վազագոյն գումարը, հոդվածների դրույթները չեն տարածվում ներդրումային ֆոնդերի վրա:

Փաստաթուղթ	«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-183-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքների մասով պարտավորությունների հաշվառման համար հարկային մարմնում բացվում են անձնական հաշվի քարտեր: Անձնական հաշվի քարտի ձևը և վարման կարգը սահմանում է վերադաս հարկայի մարմինը: Տուգանքների պարտա-

վորությունները և դրանց մարումները (վճարումը, հաշվանցումը), ինչպես նաև տուգանքների պարտավորություններից ավել վճարված գումարները հաշվառվում են դրամով (առանց լումաների): Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ լուծարման դեպքում տուգանքների մինչև հարյուր դրամ ընդհանուր պարտավորությունները և գերավճարներն անտեսվում են:

Փաստաթուղթ	«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառողների գործունեության կասեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-185-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառողների գործունեության կասեցման

մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքների հաշվառման կարգը:

Փաստաթուղթ	«Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-187-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

## Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդի միջոցների հաշվառման համար հարկային մարմնում բացվում են հատուկ անձնական հաշվի քարտեր, որոնց ձևը և վարման կարգը սահմանում է վերադաս հարկային մարմինը: Սահման-

վում է նաև ֆոնդում պարտավորությունների և դրանց մարումների, ինչպես նաև պարտավորություններից ավել վճարված գումարների հաշվառման, անձնական հաշվի քարտից հատուկ անձնական հաշվի քարտ (և հակառակը) հաշվանցումներ կատարելու կարգը:

Փաստաթուղթ	«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-191-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

## Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ եկամուտ չհամարվող տարր են համարվում յուրաքանչյուր հարկատեսակի (այդ թվում՝ հարկերին փոխարինող վճարների), տուրերի և պարտադիր այլ վճարների, բնօգտագործման վճարների, տույժերի և տուգանքների մինչև հարյուր դրամ պարտավորությունների գումարները, որոնք հարկ վճարողի լուծարման դեպքում անտեսվում են:

Օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ սահմանվում է, որ կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ, նախորդ տարվա եկամտահարկի փաստացի գումարի և (կամ) եկամտահարկի հաշվարկային մեծության մեկ վեցերորդի չափով յուրոք յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից ոչ ուշ:

Մեկ այլ փոփոխությամբ օրենքից հանվել է ձեռնարկատիրական գործունեությունը նոր սկսող հարկատուի կողմից մինչև հա-

ջորդ տարվա հունիսի 15-ը Եկամտահարկի կանխավճարներ չկատարելու վերաբերյալ նախօրոք հարկային տեսչության մարմիններին հայտնելու պահանջը:

Սահմանվում է նաև, որ նախորդ տարվա նկամուտ ընթացիկ տարվա հարկվող եկամուտը պակաս նախատեսելու դեպքում հարկատուն կանխավճարի եռամսյակային մեծությունը որոշում է ինքնուրույն՝ հարկային տեսչության մարմիններ ներկայացնելով վերադաս հարկային մարմնի կողմից հաստատված ձևի հայտարարություն:

Ուժը կորցրած է համարվում օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի «Դա Ենթակետը, որով սահմանվում էր, որ տարեկան եկամուտների մասին հաշվարկ կարող են չներկայացնել այն հարկատուները, որոնք հարկային տարվա ընթացքում ստացել են 300.000 դրամը չգերազանցող համախառն եկամուտ, որից հարկային գործակալի կողմից հարկի պահում չի իրականացվել:

Փաստաթուղթ	«Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառմից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-193-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

## Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ փաստաթղթերի ստուգումից հետո հարկ վճարողի հարկային հաշվառումը կասեցնելու հիմքերը չհայտնաբերելու դեպքում հարկային մարմին դեկավարը տրամադրում է հարկ վճարողի հաշվառման համարը (նախկինում սահմանված էր, որ հարկային մարմին դեկավարը սահմանված տեղեկությունները լրացնում է հարկ վճարո-

ղի անձնական հաշվի քարտում, տրամադրում հարկ վճարողի հաշվառման համարը, ստորագրում և կնքում է քարտը):  
Մեկ այլ փոփոխությամբ սահմանվում է, որ լուծարվելու դեպքում հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում նաև լուծարային հաշվեկշիռ (նախկինում՝ միայն դիմում, լուծարային հաշվարկներ ու հաշվետվություններ):

Փաստաթուղթ	«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացնումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-194-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ է	2011 թվականի հունվարի 1-ից

## Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ հարկ վճարողի կողմից գործունեության դադարեցման, ինչպես նաև վերսկսման համար հարկային տեսչության մարմին ներկայացվող դիմումի ձևը հաստատում է վերադաս հարկային մարմինը:

Օրենքում կատարված փոփոխությամբ հանվել է հարկ վճարողների կողմից հարկային տեսչության մարմին հաշվապահական

հաշվեկշիռ և ֆիսանսական արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնելու պահանջը:

Մեկ այլ փոփոխությամբ սահմանվում է, որ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործունեություն իրականացնելու և այլ տեսակի հարկվող օբյեկտներ չունենալու դեպքում վճարողները հարկային տեսչության մարմին են ներկայացնում շահութահարկի հաշվարկ:

Փաստաթուղթ	«Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-195-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ է	2011 թվականի հունվարի 1-ից

## Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ նշված օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածների (համապատասխանաբար կազմակերպությունների գույքահարկի հաշվարկման կարգը և ընդհանուր սեփականության գույքահարկի հաշվարկման կարգը) պահանջները խախտելու համար գանձող տուգանքների հանրագումարը չպետք է գերազանցի գույքահարկի՝ օրենքով սահ-

մանված վճարման ժամկետին չվճարված գումարը, իսկ 15-օրյա ժամկետը հաշվարկելիս ոչ աշխատանքային օրերը հաշվի են առնվում միայն առաջին տուգանքի հաշվարկման ժամանակ: Նշված տուգանքի հաշվարկումը դադարում է տվյալ գույքահարկի հաշվարկը հաշվառող մարմին ներկայացնելու պահից կամ գույքահարկի ստուգումը ներառող ստուգման ավարտից:

Փաստաթուղթ	«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-209-Ն
Յրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 29.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Հաստատվել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ նոր օրենքը: Ի տարբերություն նախորդ օրենքի՝ նոր օրենքով սահմանվում է, որ արտոնագրային վճար վճարողներ կարող են համարվել նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք: Արտոնագրային վճարի գումարի մեջ ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունն ընդունվում է 60 տոկոսի չափով: Արտոնագրային վճարի շեմը սահմանվում է 6,0 մլն դրամ (սախկինում՝ 2,5 մլն դրամ): Սահմանվում է, որ արտոնագրային վճար վճարողներ չեն կարող համարվել այն ֆիզիկական անձինք, որոնք արտոնագրային վճար վճարող համարվելու համար հարկային տեսչություն դիմում-հայտարարություններկայացնելու օրվան նախորդ և (կամ) ընթացիկ տրվա որևէ պահին իրականացրել են ՀՀ «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծում, առևտրական գործունեություն են իրականացնում խանութում, երևանում՝ 7 քմ, այլ վայրերում՝ 10 քմ առևտրական տարածքը գերազանցող կրպակում (տաղավարում), հանդիսանում են համատեղ գործունեութ-

յան պայմանագրի (բացառությամբ գյուղատնտեսական արտադրանքի արտադրության) կողմ, տիրապետում են այլ անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) 20 և ավելի տոկոսը, գործունեություն են իրականացնում մեկից ավելի վայրում, արտոնագրային վճար վճարող համարվելու համար հարկային տեսչություն դիմում-հայտարարություն ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի հանդեպ ունեն 100 հազար և ավելի դրամը գերազանցող ժամկետաց հարկային պարտավորություններ (այդ թվում՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարը): Այս օրենքի իմաստով վայր են համարվում ֆիզիկական անձի գտնվելու և (կամ) կառավարման որոշումների ընդունման վայրերը, եթե դրանցում չեն իրականացվում նշված օրենքով սահմանված գործունեության տեսակները: Նոր օրենքով սահմանվում են նաև օրենքի խախտման համար պատասխանատվությունը, գործունեության տարբեր տեսակների համար արտոնագրային վճարների չափերը:

Փաստաթուղթ	«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով լրացն և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-211-Ն
Յրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 29.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ակցիզային հարկի հաշվարկման ու վճարման ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը: Սահմանվում է, որ ակցիզային հարկ վճարողները յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար՝ մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը

(սախկինում՝ 15-ը) ներառյալ, վճարում են ակցիզային հարկը և յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, համապատասխան հարկային տեսչություն ներկայացնում ակցիզային հարկի հաշվարկ՝ հարկային մարմնի սահմանած ձևով:

Փաստաթուղթ	«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-214-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 29.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ հաստատագրված վճար վճարողներ չեն հանդիսանում «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով արտոնագրային վճար վճարող համարվող անհատ ձեռնարկատերը։  
Մի շարք փոփոխություններ են կատարվել օրենքի 11-րդ՝ սահմանային չափերին վե-

րաբերող և այլ տեղեկությունների ներկայացումը, 13-րդ՝ հայտարարությունների և այլ տեղեկությունների ներկայացման ժամկետները, 53-րդ՝ ավտոտեխնսպասարկման կայանների (կետերի) գործունեության համար հաստատագրված վճար վճարողները, հոդվածներում։

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանարապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-230-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 30.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Օրենսգրքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ մաքսային միջնորդական գործունեությունը այսուհետ լիցենզավորությունը մասն ենթակա չէ։

Փաստաթուղթ	«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-246-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 30.12.2010թ.

### Համառոտ նկարագիր

Հաստատվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը։

Փաստաթուղթ	«Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-247-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 30.12.2010թ.

### Համառոտ նկարագիր

Հաստատվել է «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքը։

Փաստաթուղթ	«Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-251-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 30.12.2010թ.

## Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ մաքսային ծառայության պաշտոն գրադեցնելու առավելագույն

տարիքը օրենքով սահմանված տարիքային աշխատանքային կենսաթոշակային տարիքն է:


Փաստաթուղթ	«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-275-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 30.12.2010թ.
Ուժի մեջ ե	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

## Համառոտ նկարագիր

Սահմանվում է, որ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով Եկամուտ են համարվում սահմանված կարգով կենսաթոշակների կամավոր կուտակային համակարգին մասնակցության շրջանակներում վճարվող կենսաթոշակները:

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով Եկամուտ չհամարվող տարր են ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերից ստացվող միջոցները (այդ թվում՝ դրանք օտարումից, փոխանակումից, այլ նմանատիպ գործարքներից, շահարածինների բաշխումից կամ նման այլ ձևով կատարված բաշխումներից, ինչպես նաև պայմանագրային ներդրումային ֆոնդի ակտիվների հաշվին կատարված գործարքներից): Համախառն Եկամտից նկազեցվող Եկամուտ չեն հանդիսանում կենսաթոշակների կամավոր ապահովագրության պայմաններով վճարվող լրացուցիչ կենսաթոշակները:

Սահմանվում է, որ համախառն Եկամտից նկազեցվող Եկամուտներ են հանդիսանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով հարկ վճարողի կողմից իր և (կամ) հարկ վճարողի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կատարած կուտակային կենսաթոշակային ապահովագրության վճարների հաշվին միևնէ կենսաթոշակների ստացման իրավունքի ծեղբերման՝ օրենքով սահմանված ժամկետը լրանալը ստացման ենթակա Եկամուտները:



յին ապահովագրության վճարները՝ հարկ վճարողի համախառն Եկամտի 5 տոկոսը չգերազանցող չափով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով հարկ վճարողի կողմից իր և (կամ) հարկ վճարողի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կատարած կուտակային կենսաթոշակային ապահովագրության վճարների հաշվին միևնէ կենսաթոշակների ստացման իրավունքի ծեղբերման՝ օրենքով սահմանված ժամկետը լրանալը ստացման ենթակա Եկամուտները:

## 1.2 | ՀՅ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի օգոստոսի 25-ի N 525 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՅ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	23 դեկտեմբերի 2010թ, N 1708-Ն
Հրապարակումը	ՀՅ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 29.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում է, որ Ելեկտրոնային հարկային հաշիվը համարվում է եկամուտը հիմնավորող փաստաթուղթ, եթե այն պարունակում է ՀՅ կառավարության 25.08.1998թ. N525 որոշմամբ սահմանված վավերապայմանները (բացառությամբ ստորագրությունների և դրանց վերաբերող տվյալների) և հաստատված է փաստաթուղթը դուրս գրողի (լիազորված անձի), իսկ հարկ վճարողների կողմից կիրառվող հաշվարկային փաստաթուղթը դուրսգրման հատուկ համակարգչային ծրագրով (բիլինգային համակարգով) ՀՅ կառավարության կողմից սահմանված կարգով դուրս գրված հարկային հաշիվների մասով՝ հարկային մարմնի Ելեկտրոնային ստորագրությամբ: Ելեկտրոնային հարկային հաշիվը համարվում է ծախսը հիմնավորող փաստաթուղթ, եթե այն պարունակում է նշված որոշմամբ սահմանված վավերապայմանները (բացառությամբ ստորագրությունների և դրանց վերաբերող տվյալների) և հաստատված է փաստաթուղթը դուրս գրողի (լիազորված անձի), իսկ հարկ վճարողների կողմից կիրառվող

հաշվարկային փաստաթուղթը դուրսգրման հատուկ համակարգչային ծրագրով (բիլինգային համակարգով) ՀՅ կառավարության կողմից սահմանված կարգով դուրս գրված հարկային հաշիվների մասով՝ հարկային մարմնի Ելեկտրոնային ստորագրությամբ վավերացված Ելեկտրոնային հարկային հաշիվներն ընդունվում են որպես ծախսը հիմնավորող փաստաթուղթ: Ծախսը հիմնավորելու համար հարկ վճարողը (հարկային մարմնը) կարող է բիլինգային համակարգով հարկային հաշիվներ դուրս գրող անձինց թղթային կամ Ելեկտրոնային տարբերակով պահանջել այն հարկային հաշիվները, որոնց ընդհանուր արժեքով և հաշվարկված ԱՎՀ-ի ընդհանուր գումարով կրճատ Ելեկտրոնային հարկային հաշիվներն ստացվել են հարկային մարմնի Ելեկտրոնային ստորագրությամբ:

Փաստաթուղթ	«Բնակչության պետական ռեգիստր վարող լիազորված մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական Եկամուտների կոմիտե տեղեկություններ ներկայացնելու մասին» ՀՅ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	23 դեկտեմբերի 2010թ, N 1712-Ն
Հրապարակումը	ՀՅ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 29.12.2010թ.
Ուժի մեջ ե	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է բնակչության պետական ռեգիստր վարող լիազորված մարմ-

նի կողմից ՀՅ ԿՎ ՊԵԿ տեղեկություններ ներկայացնելու կարգը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի օգոստոսի 30-ի N 529 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	30դեկտեմբերի 2010թ, N 1741-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 3 (806), 19.01.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ կառավարության 2000 թվականի օգոստոսի 30-ի «Ակցիզային հարկ վճարող անձանց կողմից դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերին ներկայացվող պահանջների

սահմանման, այդ փաստաթղթերի լրացման ու հումքի դիմաց վճարված ակցիզային հարկի պակասեցման կարգը հաստատելու մասին» N529 որոշումը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի N 827-Ն որոշման մեջ լրացման և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	30 դեկտեմբերի 2010թ, N 1751-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 3 (806), 19.01.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 01.06.2006թ. «Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծման կարգը սահմանելու մասին» N 827-Ն որոշման մեջ, մասնավորապես սահմանվում է, որ օտարերկրյա պետության մշակութային արժեքների պահպանության (արտահանման, ներմուծման կամ շրջանառության) լիազորված պետական մարմնի կողմից տրված (վավերացված)՝ նվազարանի լուսանկարով վկայականի առկայության դեպքում նվազարանի ժամանակավոր ներմուծման մաքսային ծևակերպումների իրականացվում են այդ վկայականի տվյալների հիման վրա՝ առանց նվազարանի լուսանկարներ ներկայացնելու պահանջի: Մաքսային ծևակերպումներն իրականացնող մարմնում լուսանկարի փոխարեն պահպում է նվազարանի վկայականի լուսապատճենը: Սահմանվում է նաև վերանորոգելու նպատակով մշակութային արժեք «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով ներմուծելիս հայտարարատուի կամ նրա լիազորված ներկայացուցչի՝ վերականգնվող մշակութային ար-

ժեքի մասին տեղեկանք ստանալու համար լիազորված պետական մարմին ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Լիազորված պետական մարմնի համապատասխան առանձնացված ստորաբաժանումը 3 աշխատանքային օրվա ընթացքում տալիս է վերանորոգման նպատակով ժամանակավորապես ներմուծվող մշակութային արժեքի մասին համապատասխան տեղեկանք: Տեղեկանքում նշվում են մշակութային արժեքի տվյալները: Տեղեկանքին կցվում է վերանորոգվող մշակութային արժեքի լուսանկար՝ կնքված և վավերացված ստորաբաժանման ղեկավարի կողմից: Հայտարարատուն կամ նրա լիազորված ներկայացուցչը մշակութային արժեքի վերանորոգման մասին տեղեկանքն ու լուսանկարը ներկայացնում է մաքսային մարմին՝ մաքսային ծևակերպումներն իրականացնելու համար: Մշակութային արժեքի վերանորոգման մասին տեղեկանքի և լուսանկարի հիման վրա մաքսային մարմինը ծևակերպում է՝ ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համարե մաքսային ռեժիմով: Վերանորոգված մշակութային արժեքը վերաբարտահանե-



լու համար հայտարարատուն ստորաբաժանում է Ներկայացնում այն և դրա վերականգնման աշխատանքների հաջորդական ընթացքի յուրաքանչյուր քառորդ փուլը փաստող մեկական ու վերջնական տեսքի 2-ական լուսանկար: Ստորաբաժանումը 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորգում է, թե արդյոք վերաբարտահանվող մշակութային արժեքը «Ժամանակավոր Ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով Ներմուծված մշակութային արժե-

քի վերանորոգման արդյունք է, հաստատվելուց հետո մաքսային մարմինը ձևակերպում է մշակութային արժեքի վերաբարտահանումը: «Ժամանակավոր Ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով Ներմուծված մշակութային արժեքին չհամապատասխանող՝ վերաբարտահանման համար այլ մշակութային արժեք Ներկայացնելու դեպքում ստորաբաժանման ղեկավարը այդ մասին անհապաղ գրավոր իրազեկում է իրավասու մարմիններին:

Փաստաթուղթ	«Հարկային մարմի գրավոր հարցման կապակցությամբ երրորդ անձանց կողմից տրամադրվող լրացուցիչ տեղեկատվություն Ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	30 դեկտեմբերի 2010թ, N 1753-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 3 (806), 19.01.2011թ.
Ուժի մեջ են	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում է հարկային մարմնի գրավոր հարցման կապակցությամբ երրորդ անձանց կողմից տրամադրվող լրացուցիչ տեղեկատվություն Ներկայացնելու կարգը, որով սահմանվում է, որ երրորդ անձ են համարվում պետական կառավարման մարմինը, տեղական ինքնակառավարման մարմինը, առևտրային կազմակերպությունը, ոչ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը, որը հարկային մարմինը է Ներկայացնում այլ հարկ վճարողի կամ այլ ֆիզիկական անձի գործարքի կամ գործառնության կամ գործունեության մասին տեղեկություններ: Կարգի դրույթները չեն վերաբերում հարկ

վճարողների կողմից Ներկայացվող՝ իրենց տնտեսական կամ ձեռնարկատիրական կամ այլ գործունեության մասին հաշվետվություններին, հաշվարկներին, հայտարարություններին և այլ փաստաթղթերին, որոնք Ներկայացվում են «Հարկերի մասին» և առանձին հարկատեսակների մասին ՀՀ օրենքներով սահմանված կարգով, հարկ վճարողների կողմից Ներկայացվող՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված ցանկում ընդգրկված ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական ծավալների, իրացման փաստացի գների, մատուցված ծառայությունների ծավալների և դրանց փաստացի սակագների մասին

հաշվետվություններին, կամավորության սկզբունքով ներկայացվող տեղեկություններին, պետական, բանկային, ապահովագրական, առողջապահական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք կազմող տեղեկություններին, որոնք հարկային

մարմնին տրամադրվում են օրենքով սահմանված կարգով: Վերոնշյալ կարգով սահմանվում է երրորդ անձանցից լրացուցիչ տեղեկատվություն վերադաս հարկային մարմնին տրամադրելու ընթացակարգը:

### 1.3 | Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի «բ» Ենթակետի կիրառման մասին» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	25 նոյեմբերի 2010թ, 17 նոյեմբերի 2010թ, N 22
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 31 (383), 29.12.2010թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ նշված օրենքի 3-րդ հոդվածի «բ» Ենթակետի դրույթը (որով սահմանվում է, որ ԱԱՀ-ի 58.35 մլն դրամի շեմը չի կիրառվում լիցենզավորման Ենթակա այն գործունեություն իրականացնող կամ լիցենզիա ունեցող անձի նկատմամբ, որի գործունեության լիցենզիայի համար պետական տուրքի տարեկան գումարը սահմանված է 100 հազար դրամ կամ ավե-

լի) կիրառվում է այն անձանց նկատմամբ, որոնք իրականացնում են լիցենզավորման Ենթակա այսահիք գործունեության տեսակներ, որոնց համար օրենքով պետական տուրքի տարեկան գումարը կամ լիցենզիայի գործողության մեկ տարվան բաժին ընկնող գումարը սահմանված է կամ կազմում է 100 հազար դրամ կամ ավելի:

Փաստաթուղթ	«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ կետի և 94-րդ հոդվածի կիրառման մասին» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	06 դեկտեմբերի 2010թ, N 23
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 31 (383), 29.12.2010թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ մինչև 17-ը ներառյալ նստատեղ ունեցող միկրոավտոբուսներով կանոնավոր ուղևորափոխադրումների մասով նշված օրենքի 94-րդ հոդվածի 1-ին կետի «ա» կամ «բ» Ենթակետերով (համապատասխանաբար հարկ վճարողների կողմից ներկայացված ելակետային տվյալների և (կամ) ուղղիչ գործակիցների փաստացի մեծությունից և մինչև գործունեությունը սկսելը հարկ վճարողի կողմից հարկային տեսչության մարմին ելակետային տվյալների և (կամ) ուղղիչ գործակիցների չներկայացում) սահմանված խախտումներ արձանագրելու դեպքերում հաստատագրված վճարի չափը հաշվարկվում է նույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ կետերի համաձայն (հաստատագրված

յունքում արձանագրված հաստատագրված վճարի ելակետային տվյալների և (կամ) ուղղիչ գործակիցների փաստացի մեծությունից և մինչև գործունեությունը սկսելը հարկ վճարողի կողմից հարկային տեսչության մարմին ելակետային տվյալների և (կամ) ուղղիչ գործակիցների չներկայացում) սահմանված խախտումներ արձանագրելու դեպքերում հաստատագրված վճարի չափը հաշվարկվում է նույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ կետերի համաձայն (հաստատագրված

Վճարի չափի չիմսավորված լինելու դեպքում հարկային տեսչության մարմինի կողմից հաստատագրված վճարի հաշվարկում), բայց ոչ պակաս Օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն որոշվող հաստատագրված վճարի չափից, որով սահմանվում է, որ մինչև 17-ը Ներառյալ նստատեղ ունեցող միկրոավտոբուսներով ՀՀ օրենքով սահմանված կարգով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելու դեպքում տվյալ ամսվա համար հաշվարկված և վճարման

Ենթակա հաստատագրված վճարի չափը չի կարող պակաս լինել տվյալ երթուղու սպասարկման համար անհրաժեշտ միկրոավտոբուսների քանակին համապատասխան օրենքով սահմանված կարգով հաշվարկված հաստատագրված վճարի ընդհանուր գումարից: Օրենքի 94-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված տուգանքը կիրառվում է նշված կարգով որոշվող պակաս հաշվարկված կամ չհաշվարկված հաստատագրված վճարի չափի նկատմամբ:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերության համաձայն ապրանքի մատակարարում համարվող գործարքների մասով ԱԱՀ-ի գումարը հաշվարկված կամ չհաշվարկված կամ չհաշվարկված հաստատագրված վճարի չափի նկատմամբ:
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, N 25
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 31 (383), 29.12.2010թ.

## Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ:

1. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերության համաձայն ապրանքի մատակարարում համարվող գործարքների մասով ԱԱՀ-ի գումարը հաշվարկվում է լրիվ արժեքով հատուցման գումարի նկատմամբ կիրառելով 16.67 տոկոս հարկի հաշվարկային դրույթաչփը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործարքների մասով հաշվարկվող ԱԱՀ-ի գումարը պետք է որոշվի օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ և 9-րդ կետերին համապատասխան որոշվող հարկվող շրջանառության նկատմամբ 20 % դրույթաչփ կիրառելու միջոցով:
2. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերության համաձայն ապրանքի մատակարարում համարվող գործարքների մասով ՀՀ կառավարության 19.02.09թ. N 199-Ն որոշմամբ սահմանված կարգով հաշ-

վանցման ենթակա են մատակարարի հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները:

3. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերության համաձայն ապրանքի մատակարարում համարվող գործարքների մասով հաշվարկված ԱԱՀ-ի գումարի և այդ գույքի ձեռքբերման (այդ թվում՝ ներմուծման) հարկային հաշիվներում (գույքի ներմուծման մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարի միջև առաջացող բացասական տարբերությունը, օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան, հաշվանցման ենթակա չէ:

4. Անհատ ձեռնարկատեր չիանդիսացող ֆիզիկական անձի կողմից անձնական օգտագործման մարդատար ավտոմեքենաների հատուցման դիմաց օտարման մասով օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթները չեն կիրառվում:

Փաստաթուղթ	«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն հրականացնող ընկերությունների բյուրոյի գործունեության հետ կապված հարկման մի քանի հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ Կառավարական պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	16 դեկտեմբերի 2010թ, N 28
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր №31 (383), 29.12.2010թ.

## Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ.

1. | Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների և ՀՀ կենտրոնական բանկի կողմից Բյուրոյի կազմում ստեղծված Երաշխավորման ֆոնդին՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով կատարվող բոլոր վճարները (միանվագ վճար, պարբերաբար վճար, լրացուցիչ վճար) Բյուրոյի մոտ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով եկամուտ չեն համարվում՝ անգամ եթե այդ վճարումները կատարվել են մինչև 01.01.2011թ:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կազմակերպությունների ստացած սուբսիդիաներից շահութահարկի հաշվարկման որոշ հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿՀ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	16 դեկտեմբերի 2010թ. N 29
Յրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 31 (383), 29.12.2010թ.

## Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ.

1. | Եթե սուբսիդիաների տրամադրումը պայմանավորված է սահմանված կարգով պետության կամ լիազորված մարմնի կողմից հաստատված սակագների կիրառման հետ, ապա տրամադրված սուբսիդիաների գումարները կազմակերպությունների համար չեն համարվում եկամուտ և չեն հարկվում շահութահարկով,
2. | Եթե սուբսիդիաները տրամադրվում են ապրանքների մատակարարման (կամ) ծառայությունների մատուցման դիմաց, ապա տրամադրված սուբսիդիաների գումարները կազմակերպությունների մոտ ենթակա են հարկման շահութահարկով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով,
3. | Եթե սուբսիդիաները տրամադրվում են ոչ առևտրային կազմակերպության կանոնադրական գործունեության իրականացումն ապահովելու նպատակով, ապա տրամադրված սուբսիդիաների գումարները ոչ

2. | Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների կողմից Բյուրոյի կազմում ստեղծված Երաշխավորման ֆոնդին՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով կատարվող բոլոր վճարները (միանվագ վճար, պարբերաբար վճար, լրացուցիչ վճար) ապահովագրական ընկերությունների մոտ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում են որպես համախառն եկամտից նվազեցվող ծախս (ամբողջությամբ՝ անգամ եթե այդ վճարումները կատարվել են մինչև 01.01.2011թ.:

առևտրային կազմակերպությունների համար չեն համարվում եկամուտ և չեն հարկվում շահութահարկով,

4. | Եթե տրամադրված սուբսիդիաների գումարները (կամ դրանց մի մասը) փաստացի օգտագործվում են սկզբնապես նախատեսված նպատակից տարբերվող այլ նպատակներով, ապա ստացված սուբսիդիաների գումարների (կամ դրանց մի մասը) շահութահարկով հարկումը կազմակերպությունների մոտ իրականացվում է դրանց փաստացի օգտագործման նշանակությանը համապատասխան:



Փաստաթուղթ	«Հահութահարկով հարկման նպատակով լուծարվող հիմնական միջոցների չամորտիզացված արժեքի հաշվառման վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	16 դեկտեմբերի 2010թ. N 30
Նրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 31 (383), 29.12.2010թ.

## Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ.

- 1.** Հահութահարկով հարկման նպատակով սեփականության իրավունքով ձեռքբերված հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով, իսկ Ստանդարտին համապատասխան հիմնական միջոցի միավորի սկզբնական ճանաչմանը հաջորդող չափումները հաշվի չեն առնվում (այսինքն՝ տվյալ հիմնական միջոցը շարունակում է հաշվառվել սկզբնական ձեռքբերման արժեքով՝ հաշվի առած մաշվածությունը): Ըստ որում՝ նշված չափումներից հաշվապահական հաշվառման տեսանկյունից առաջացող եկամուտները կամ ծախսերը շահութահարկով հարկման նպատակով հաշվի չեն առնվում (այսինքն՝ չեն համարվում եկամուտ կամ նվազեցվում),
- 2.** Հահութահարկով հարկման նպատակով հիմնական միջոցի դուրսգրումը հաշվի չի առնվում (այսինքն՝ տվյալ միջոցը շարունակում է հաշվառվել սկզբնական ձեռքբերման արժեքով՝ հաշվի առած մաշվածությունը՝ անկախ այն հանգամանքից, թե հարկ վճարողը տվյալ հիմնական միջոցից ակնկալում է, թե չի ակնկալում տնտեսական
- օգուտներ, քանի դեռ տվյալ հիմնական միջոցը պատկանում է հարկ վճարողին սեփականության իրավունքով).
- 3.** Հահութահարկով հարկման նպատակով դուրս գրված հիմնական միջոցի ոչնչացման կամ որպես այլ նշանակության գույք վաճառելու (կամ օգտագործելու) դեպքում տվյալ հիմնական միջոցի չամորտիզացված արժեքը համախառն եկամտից նվազեցման ենթակա չէ,
- 4.** Հահութահարկով հարկման նպատակով հիմնական միջոցի լուծարման արդյունքում հետագա օգտագործման կամ վաճառքի համար առանձնացված ընթացիկ նյութական ակտիվների կամ այլ ոչ ընթացիկ նյութական ակտիվների սկզբնական ձեռքբերման արժեքը որոշվում է տվյալ հիմնական միջոցի սկզբնական ձեռքբերման արժեքի ձևամասակ այդ հիմնական միջոցի սկզբնական արժեքի մեջ նշված ակտիվների արժեքների տեսակարար կշիռներից ելնելով, որոնք կիրառվում են տվյալ հիմնական միջոցի՝ հարկային հաշվառման նպատակով որոշված մնացորդային արժեքի նկատմամբ:

Փաստաթուղթ	«Պետական տուրքի վճարման որոշ հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	27 դեկտեմբերի 2010թ, 23 դեկտեմբերի 2010թ. N 32
Նրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 31 (383)1, 30.12.2010թ.


## Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ.

- 1.** «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասինը ՀՀ 16.09.2010թ. ԶՕ-121-Ն օրենքով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-
- րդ հոդվածի 9.6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված տարածքային սփռման համար տարեկան պետական տուրքի դրույքաչափը չի տարածվում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով սահմանված

գործողության ժամկետը մինչև 2015թ. հունվարի 1-ը Երկարաձգված՝ մարզային հեռուստընկերությունների (դրանց թվում չեն ներառվում Երևան քաղաքում գործող լիցենզավորված հեռուստաընկերությունները) անալոգային լիցենզիաների վրա:

**2.** | 17.10.2010թ-ից սկսած «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով սահմանված գործողության ժամկետը մինչև 2015թ. հունվարի 1-ը Երկարաձգված՝ մարզային հեռուստաընկերությունների (դրանց թվում չեն ներառվում Երևան քաղաքում գործող լիցենզավորված հեռուստաընկերությունները) անալոգային լիցենզիաների համար տարեկան պետական տուրքը ենթակա է վճարման «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթափոխ:



## 2. ՀԱՐԱԿԻՑ (ՏՆՏԵՍԱԿԱՆ) ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաստաթուղթ	«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08.12.2010թ, ՀՕ-182-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ այն դեպքում, եթե օրենքով սահմանված դեպքերում վարձու աշխատողները գործատուների համար սահմանված ժամկետներում աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների 3 տոկոսի չափով ինքնուրույնաբար սոցիալական վճարներ են կատարում, այդ սոցիալական վճարները համարվում են իրենց հաշվարկած սոցիալական վճարներ, որոնք կարող են ճշտվել «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Մեկ այլ լրացմամբ սահմանվում է, որ մինչև հաշվետուու տարին ավարտվելը գործունեությունը (Եկամտի աղբյուրի) դադարեցնելու և ՀՀ-ից մեկնելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր է տարեկան եկամուտների մասին հայտարարագիրը ներկայացնել

և պետական գոանցման վկայականը ժամանակավոր հանձնել լիազոր մարմին ոչ ուշ, քան մեկնելուց մեկ ամիս առաջ: Հայտարարագրով հաշվարկված սոցիալական վճարի գումարը վճարվում է ՀՀ պետական բյուջե՝ վճարման վերջնահաշվարկը կատարելուց հետո՝ 5-օրյա ժամկետում:

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ գործատուները հաշվետու եռամսյակի համար լիազորված մարմին են ներկայացնում օրենսդրությամբ սահմանված ձևով սոցիալական վճարների եռամսյակային հաշվետվություն (ամսական կտրվածով)` մինչև այդ եռամսյակին հաջորդող առաջին ամսվա 20-ը (Աերայալ) (Աշված փոփոխությամբ պայմանավորված օրենքից հանվել է մինչև 5 և 5-ից ավել վարձու աշխատող ունեցող գործատուների կողմից համապատասխանաբար ամսական և եռամսյա-



կային հաշվետվություններ ներկայացնելու դրույթը): Լիազոր մարմին ներկայացրած տեղեկության մեջ հետագայում սխալներ հայտնաբերելու դեպքում գործատուն լիազոր մարմին կարող է ներկայացնել ճշտված տեղեկություն:

Օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ սահմանվում է ապահովադիրների կողմից լիազոր մարմին ներկայացվող հաշվետվությունը չներկայացնելու դեպքում նախատեսվող տուգանքների հաշվարկման չափն ու կարգը:

Օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ պայմանավորված՝ վարձու աշխա-

տողների աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանը, իսկ պետական մարմիններում՝ աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման իրամասագիրը սահմանված կարգով չվարելու կամ սահմանված կարգի կոպիտ խախտումով վարելու դեպքերում գործատուն օրենքի խախտման նշված փաստն արձանագրելու ամսում հաշվարկում և վճարում է չձևակերպված վարձու աշխատողի համար սոցիալական վճար՝ 60.000 դրամի չափով։

Օրենքում կատարված մեկ այլ լրացմամբ սահմանվում է սոցիալական վճարների պարտավորությունների հաշվառման կարգը։

Օրենքի հավելված 1-ում կատարված լրացմամբ սահմանվում է, որ ժամանակագրական կարգի կիրառման ժամանակ, ապահովադիր կողմից ՀՀ պետական բյուջե կատարված փաստացի վճարումների կամ հաշվանցումների հաշվին, եթե ապահովադիրը կոնկրետ չի նշել, թե որ ժամանակաշրջանի և որ պարտավորության մարմանն է այն վերաբերում (նպատակային չէ), ապա առաջնահերթ մարզում են առկա սոցիալական վճարների պարտավորությունները՝ սոցիալական վճարի գումարները, տույժերը, տուգանքները հերթականությամբ։

Փաստաթուղթ	«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-199-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի ապրիլի 1-ից

### Դամառու նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված էլեկտրոնային եղանակով և ժամկետներում հաշվետվությունը (հայտարարագիրը) հարկային մարմին չներկայացնելու դեպքերում կիրառելի են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, «Հարկերի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքներով սահմանված դրույթները (ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից):



Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ պետական գրանցում ստացած, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցված ապահովա-

դիրները համարվում են հաշվառված՝ լիազորված մարմնում գրանցում ստանալու պահից:

Փաստաթուղթ	«Դրամարկղային գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-184-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքների մասով պարտավորությունների հաշվառման համար հարկային մարմնում բացվում են անձնական հաշվի քարտեր: Անձնական հաշվի քարտի ձևը և վարման կարգը սահմանում է վերադաս հարկային մարմինը: Տուգանքների պար-

տավորությունները և դրանց մարումները (վճարումը, հաշվանցումը), ինչպես նաև տուգանքների պարտավորություններից ավել վճարված գումարները հաշվառվում են դրամով (առանց լրացների): Կազմակերպության լուծարման դեպքում տուգանքների միջևն հարյուր դրամ ընդհանուր պարտավորությունները և գերավճարներն անտեսվում են:

Փաստաթուղթ	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-186-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ տարեկան պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթում վճարման նպատակը չնշելու կամ վճարումից հետո՝ 30-օրյա ժամկետում, վճարման նպատակի վերաբերյալ գրավոր հայտարարություն լիազոր մարմին չներկայացնելու դեպքում տարեկան պետական տուրք վճարողի կողմից վճարված տարեկան պետական տուրքի գումարների հաշվին առաջին հերթին մար-

փում են հերթական տարեկան պետական տուրքի գումարները (ըստ դրանց վճարման համար սահմանված ժամկետի վաղեմության), ապա օրենքով սահմանված տարեկան պետական տուրքի տույժերի գծով պարտավորությունները:

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է պետական տուրքի պարտավորությունների հաշվառման կարգը:

Փաստաթուղթ	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-203-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 29.12.2010թ.
Ուժի մեջ ե	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

## Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ պետական տուրքի (հյուպատոսական գանձման) միասնական դրույքաչափեր են սահմանվում հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար (նախկինում սահմանված էին առանձին դրույքաչափեր ԱՊՀ, ԱՍՀ, Վրևմտյան Եվրոպական և այլ երկրների համար), որոնք չեն ներառում ծառայությունների կամ գործողությունների հետ կապված ծախսերը (ուժի մեջ է 2011թ. հունվարի 1-ից):

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ պետական տուրքի դրույքաչափն արտարժույթով հաշվարկելու ժամանակ տվյալ արտարժույթով ամբողջական թիվ ստանալու համար իրականացվում է դրույքաչափի կլորացում: Մինչև 0,5-ի դեպքում դրույքաչափը կլորացվում է դեպի փոքրացում, իսկ 0,5-ից ավելի դեպքում՝ դեպի մեծացում:

Մեկ այլ լրացմամբ սահմանվում է, որ ՀՀ տարածքից դուրս իրականացված ծառայությունների կամ գործողությունների համար գանձված պետական տուրքը վերադարձվում է գանձող մարմնի կողմից ընթացիկ



ամսում գանձված պետական տուրքի այն գումարներից, որոնք օրենքով սահմանված կարգով դեռ չեն փոխանցվել պետրութե: Այս դեպքում կազմվում և վճարողի դիմումին է կցվում նաև ակտ, որի օրինակելի ձևը և պետական տուրքի վերադարձի փաստաթղթավորման կարգը սահմանում է ՀՀ արտաքին գործերի նախարարությունը:

Փաստաթուղթ	«Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-188-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ է	2011թվականի հունվարի 1-ից

## Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է ճանապարհային վճարների պարտավորությունների հաշվառման կարգը:

Օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ սահմանվում է, որ ճանապարհային վճարի վճարումն ուշացնելու համար տույժը կիրառվում է ժամանակին չվճարված վճարի գումարների (այդ թվում՝ ստուգմամբ հայտնաբերված) նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամրող ժամանակաշրջանի համար՝ բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար: Ստուգմամբ հայտնաբերված ժամանակին չվճարված վճարի գումար-



Ներք, ինչպես նաև օրենքով սահմանված տույժերը պետական բյուջե վճարվում են հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում: Ստուգման ակտով առաջարկված վճարի գումարների նկատմամբ նշված 10-օրյա ժամկետում օրենքով սահմանված

տույժերը չեն հաշվարկվում: Այդ ժամկետը լրանալուց հետո ստուգման ակտով առաջարկված վճարի գումարների չվճարման կամ մասնակի վճարման դեպքում օրենքով սահմանված տույժերի հաշվարկի վերսկսման ժամանակ նշված 10-օրյա ժամկետը հաշվի չի առնվում:

Փաստաթուղթ	«Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-212-Ն
Յրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (803), 29.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011 թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքի հանվում է 20-35 տոնսա և ավելի բեռնատարողությամբ ՀՀ-ում գրանցված բեռնատար ավտոմեքենաների սեփականատերի կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորագրերով բեռնատար ավտոմեքենաներ շահագործող ֆիզիկական անձանց ու կազմակերպությունների, անկախ բեռնափոխադրումների իրականացումից, յուրաքանչյուր ամսվա համար միևնէ այդ ամսվա առաջին օրն իրենց գրանցման վայրի հարկային մարմին այդ ավտոմեքենաների վերաբերյալ ՀՀ հարկային մարմնի սահմանած ձևով ելակետային տվյալներ ներկայացնելու պահանջը:




Փաստաթուղթ	«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	08 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-190-Ն
Յրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (802), 27.12.2010թ.
Ուժի մեջ ե	2011թվականի հունվարի 1-ից

### Համառոտ նկարագիր

Օրենքով սահմանվում է բնապահպանական և բնօգտագործման վճարների պարտավորությունների հաշվառման կարգը:  
Օրենքում կատարված փոփոխությամբ սահ-

մանվում է, որ բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողների կողմից հարկային և լիազոր մարմիններ ներկայացվող հաշվարկ-հաշվետվությունները

օրենքով սահմանված ժամկետից 2 ամսից ավելի ուշ Ներկայացնելու կամ չներկայացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար վճարողից գանձվում է տուգանք՝ վճարման Ենթակա վճարի ընդհանուր գումարի 5 տոկոսի չափով։ Նշված տուգանքների համրագումարը չպետք է գերազանցի վճարի՝ օրենքով սահմանված վճարման ժամկետին չվճարված գումարը, իսկ 15-օրյա ժամկետը հաշվարկելիս ոչ աշխատանքային օրերը հաշվի են առնվում միայն առաջին տուգանքի հաշվարկման ժամանակ։ Սահմանված տուգանքի հաշվարկումը դադարում է տվյալ հարկի հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմին Ներկայացնելու պահից կամ տվյալ վճարի գծով պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումը ներառող ստուգման ավարտից։ Սահմանվում է նաև, որ ստուգման ակտով առաջադրված վճարի գումարների նկատմամբ 15-օրյա ժամկետում օրենքով սահ-



մանված տույժերը չեն հաշվարկվում։ Վյու ժամկետը լրանալուց հետո ստուգման ակտով առաջադրված վճարի գումարների չվճարման կամ մասնակի վճարման 15-օրյա ժամկետը հաշվի չի առնվում։

### 3. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

#### 3.1 | Ծրագրեր և կատարողական

##### 3.1.1 | Ծրագրեր և կատարողական /հարկային ծառայության մասով/

ՀՀ ԿԳ ՊԵԿ նախագահի 21.12.2010թ. N 2995-Ա հրամանով հաստատվել է հարկային եկամուտների, ապաքների և գերավճարների վերլուծության իրականացման մեթոդաբանությունը, որով սահմանվում են հարկային մարմնում հարկային եկամուտների և պարտադիր վճարների, ապաքների և գերավճարների վերլուծության իրականացման հիմնական ցուցանիշները, դրանց վերլուծությունների իրականացման հիմնական ուղղությունները, ցուցանիշների հաշվարկման և գնահատման նկարագրությունը։ Մեթոդաբանության նպատակն է հարկային մարմնում վերլուծությունների իրականացման միջոցով բացահայտել հարկային եկամուտների, ապաքների և գերավճարների աճի կամ նվազման հետ

կապված շեղումների հիմնական ուղղությունները։ ՀՀ ԿԳ ՊԵԿ նախագահի 21.12.2010թ. N 2996-Ա հրամանով հաստատվել է ՀՀ հարկային համակարգում հարկ վճարողների հեռախոսազերի սպասարկման կենտրոնի ստեղծման ծրագիրը և դրանից բխող միջոցառումների ցանկը, որի նպատակն է ՀՀ հարկային համակարգում հեռախոսազերի սպասարկման կենտրոնի ստեղծման միջոցով նպաստել հարկերի վճարման և հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությանը, բարձրացնել հարկային օրենսդրության վերաբերյալ բացատրական աշխատանքների մակարդակը, ընդլայնել հարկ վճարողներին իրագեկման

թնույթի ծառայությունների մատուցումը: Յարամանով սահմանվում են հեռախոսագանգերի կենտրոնի կարգավիճակը, գործառույթները, անհրաժեշտ մասնագետների ընտրության կարգը, սպասարկվող հարցերի շրջանակները, հեռախոսազնությունների կենտրոնի աշխատանքների մոնիթորինգի անցկացման կարգը և այլն:

ՀՀ ԿԳ ՊԵԿ նախագահի 22.12.2010թ. N 3000-Ն հրամանով հաստատվել է խոշոր հարկ Վճարողների ընտրության չափանիշը սահմանելու և դրանց կիրառման կանոնակարգը, որով սահմանվում են խոշոր հարկ Վճարողների ընտրության չափանիշները, դրանց շեմը, չափանիշի կիրառման շրջանակը, ընտրության քայլերը:

## 3.2 | Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

### 3.2.1 | Գանգատարկումներ և ծառայողական քննություններ /հարկային ծառայության մասով/

20.12.2010թ-ից մինչև 20.01.2011թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԳ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից լսվել են թվով 2 ծառայողական քննության ընթացքում ստեղծված սյուլթեր, որի արդյունքում թվով 7 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԳ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 20.12.2010թ-ից մինչև 20.01.2011թ-ն ընկած ժամանակահատվածում լսվել է թվով 14 բողոք, որից.

- **բավարարվել է 7 բողոք,**
- **բավարարվել է մասնակի 1 բողոք**
- **կարճվել է 3 բողոք**
- **մերժվել է 3 բողոք:**

## 3.3 | Սիցազգային համագործակցություն

2010թ. դեկտեմբերի 27-ին ք. Մոսկվայում տեղի է ունեցել ՀՀ և ՌԴ մաքսային ծառայությունների ներկայացուցիչների աշխատանքային հանդիպում՝ նվիրված հայկական կոնյակի արտադրության Ռուսաստանի Դաշնություն արտահանելու հարցին: Հանդիպման ընթացքում ռուսական կողմը տեղեկացրեց, որ Վերին Լարս անցակետը ներառված չէ ՌԴ կառավարության համապատասխան որոշմամբ հաստատված սահմանային կետերի ցանկում, համաձայն որի թույլատրվում է ալկոհոլային արտադրանքի ներմուծումը ՌԴ:

Համատեղ քննարկումների արդյունքում կողմերը եկան համաձայնության, որ ՀՀ ԿԳ պետական եկամուտների կոմիտեն հարցը կրարձրացնի տնտեսական հարցերով հայռուսական միջկառավարական հանձնաժողովի առաջիկա նիստի ընթացքում:

Ռուսական կողմը պատրաստակամություն հայտնեց ՀՀ-ից արտահանվող կոնյակի արտադրության մաքսային ծևակերպումների



արագացման և պարզեցման հարցը քննարկել ՀՀ և ՌԴ մաքսային ծառայությունների միջև տեղեկատվության փոխանակման համապատասխան կարգի հաստատումից հետո:

## 3.4 | Հարկային և մաքսային թվերի համառոտագիր

### 3.4.1 | Հարկային վիճակագրության մի քանի թվեր

	Ցուցանիշ	2010 թվական		
		Դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	Աճը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-դեկտեմբեր) %
1	2	3	4	5
1	Հաշվառված՝ ՀՎՀՀ ստացած հարկ վճարողներ	1068	14,811.00	94.39
2	Հարկային մարմնի կողմից պետքուժե հավաքագրված Եկամուտներ (մլն դրամ), այդ թվում՝	40165.359	442,437.67	111.84
2.1	ԱԱԲ	13144.641	113,658.56	136.50
2.2	Ծահութահարկ	6920.67	77,813.01	96.30
2.3	Ակցիզային հարկ	242.872	6,364.63	101.11
2.4	Եկամտահարկ	6764.938	73,939.88	122.81
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	6,851.35	105,336.96	102.36
2.6	Այլ	6,240.89	65,325.62	105.20
3	Հարկային մարմնի կողմից կատարված ստուգումներ (հատ)	2,400.0	29,933.0	98.82
4	Հարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	6,191.16	31,507.84	104.80

### 3.4.2 | Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

	Ցուցանիշ	2009թ.		2010թ.		Աճը նախորդ տարվա նկատմամբ %	
		Հունվար-դեկտեմբեր	Դեկտեմբեր	Հունվար-դեկտեմբեր	Դեկտեմբեր	Հունվար-դեկտեմբեր	Դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային Եկամուտներ (մլն դրամ)	228 201	23 185	255 428	18 134	119.9	78.2
2	Արտաքին առևտուրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	1 498 811	165 597	1 836 586	192 291	122.5	116.1
2.1	Արտահանում (մլն դրամ)	282 398	28 321	385 132	41 375	136.4	146.1
2.2	Ներմուծում (մլն դրամ)	1 216 413	137 277	1 451 454	150 916	119.3	109.9
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	23 176	3 875	25 247	2 653	108.9	68